ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՖԵԴԵՐԻԿՈ ԳԱՐՍԻԱ ԼՈՐԿԱՅԻ ՊԻԵՍՆԵՐԻ ՍՅՈՒԺԵՏԱՅԻՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ցանկացած մարդ ինքնին ողբերգություն է,
և ողբերգական այդ աշխարհը դրամատիկական
թատրոնի հետ մեկտեղ պարտադրում է
անդրադառնալ ողբերգությանը:
Ֆեդերիկո Գարսիա Լորկա

***

Լորկայի պիեսները պոետիկական են, բանաստեղծական, դրանք ասես թատրոնի և պոեզիայի միախառնում լինեն, որոնք ընթերցողին հիացնում են իրենց զգացմունքայնությամբ և անմիջականությամբ: Նրա դրամաներն ուղղակիորեն արտացոլում են կյանքի և մահվան, սիրո և ատելության, անհատի ներաշխարհի ազատության և հասարակական արտաքին ճնշումների միջև եղած ճակատագրական հակադրությունները: Հասարակական կարծիքի կարևորությունը դառնում է մի շարք դրամատիկ կերպարների ողբերգության պատճառ: Մյուս կողմից դժվար ըմբռնելի են Լորկայի պիեսները, իսկ դժվարությունը, անշուշտ, բազմաբովանդակ սիմվոլների, մարդկային երկվության, դիմակահանդեսների մեջ է: Ներկայացվող պատկերները խորհրդավոր են, զարմանալի, թերևս նույնչափ խորհրդավոր մթնոլորտի առկայությունն իր հերթին ստեղծագործությունը դարձնում է անմատչելի: Տարբեր դրվագներում անհնարին է դառնում հետևել պիեսի տրամաբանական կապակցելիությանը, քանի որ միշտ չէ, որ հենց այդ թվացյալ տրամաբանական կապն է տանում գործողությունների զարգացմանը կամ հնարավոր հանգուցալուծմանը:

Շատ հաճախ Լորկայի պիեսները կառուցվում են սիմվոլների, մոգական ուժերի շուրջ: Տխրությամբ և խորհրդավորությամբ լի մթնոլորտի

նկարագրությամբ՝ Լորկան մեզ է հաղորդում մահվան ողբերգական ներկայությունը:

Ֆեդերիկո Գարսիա Լորկայի դրամատուրգիայի հիմքում ընկած է հակադրությունը:

Լորկայի շատ պիեսներ արտահայտում են անհատի ներաշխարհի և արտաքին ճնշումների անհամապատասխանություն, որն անհատին խանգարում է զարգանալ և ինքնահաստատվել, իսկ այստեղից ծնվում է խորը հակադրություն. այն է՝անձի ազատության և հասարակական նորմերի բախումը, ինչի հետևանքով մարդը հեռանում և օտարանում է սեփական ես-ից:

Գրաքննադատ Խոսե Մոնլեոնը Լորկայի ստեղծագործության մեջ առանձնացնում է սիրո և ազատության փոխհարաբերությունը.

«Կարծում եմ, որ երկու սիրող սրտերի դժբախտությունը ծնվում է այն աշխարհի ամենամեծ անարդարությունից, որում մենք ապրում ենք: Լորկայի մոտ սերը կյանք է, բանաստեղծի գեղարվեստական և մարդկային անհատականության կիզակետն ու կենտրոնը: Լորկայի սերն անբաժան է մահից, դրանից փախուստ չկա»[1]:

Սիրային հիասթափությունները և սեռական անբավարարության տարբեր դրսևորումները ևս կազմում են Լորկայի դրամատուրգիայի հիմքը, որոնք, ցավոք, ուղեկցվում և ավարտվում են ողբերգությամբ: Սեռական անբավարարվածությամբ ապրող հերոսները նույն բարքերի, կարծրացած ավանդույթների, հասարակական և կրոնական նորմերի զոհն են դառնում: Լորկայի դրամաներում կանայք են, որ ամենաշատն են ենթարկվում հասարակական կարծիքի անողոք քննադատությանը և ճնշմանը, նույն դրամաները գրվում են կանացի տեսանկյունից, ինչի գագաթնակետն է համարվում «Բերնարդա Ալբայի տունը» պիեսը, որտեղ Պեպե Էլ Ռոմանոն նույնիսկ չի էլ հայտնվում բեմահարթակին: Տղամարդը լոկ ստվեր է՝ կնոջ երևակայությամբ մեծարված կերպար, բայց երբ այդ իդեալականացված կերպարը «միս ու արյուն է ստանում», մարմնավորվում, ապա շատ հաճախ կնոջ մեջ հիասթափություն է առաջացնում:

Գրականագետ Ալվարես դե Միրանդան նշում է, որ «Արյունոտ հարսանիք» պիեսում Լեոնարդոն դեռ շարունակում է սիրել իր նախկին հարսնացուին, որը շուտով ուրիշի կինը պիտի դառնա: Աղջիկը չի ընդունում նրան. «Ես հպարտություն ունեմ, որն ինձ ստիպում է ամուսնանալ ուրիշի հետ»,- ասում է նա:

Հակառակ դեպքում հասարակությունը չի ների նրանց «արգելված

---

[1] Allen Josephs and Juan Caballero "Lorca charla sobre el teatro", 1985, Madrid, p.37-78

սիրո» ճաշակման համար: Սիրո կենարար ուժը ստիպում է տղային անհույս սիրով սիրել աղջկան և օտարանալ սեփական ընտանիքին և երեխային:

«Բերնարդա Ալբայի տունը» ողբերգություն է՝ երեք գործողությամբ: Որոշ գրականագետներ այն համարում են անդալուզյան դրամա, մյուսները հակված են նրա կաստիլյան ծագմանը, ստույգ տվյալներ չկան:

Այս պիեսում մեզ տրվում է բացառապես հասարակական ճնշող միջավայրի նկարագրություն, որից սերում է կոնֆլիկտի գաղափարը՝ Բերնարդա Ալբայի տան փակ տարածությունը[1]:

Այս պիեսը բացառիկ է այն առումով, որ Լորկային հաջողվում է այն լիովին «մաքրել» քնարական բոլոր զեղումներից՝ շեշտելով դրամատիկական տարրը. այստեղ տեղ չի տրվում բանաստեղծությանը. տեսանելի է միայն իրականությունը, չորս պատի մեջ փակված կանանց ներքին դրամա, որոնք առհասարակ չեն կարողանում բավարարել իրենց սեռական պահանջները: Այս դրամայի ողբերգությամբ Լորկան վեր է հանում ազատության և իշխանության սկզբունքների հավերժական հակադրությունն ու բախումը:

«Բերնարդա Ալբայի տունը» ողբերգություն է, որի առանցքում ընկած է Լորկայի դավանած սիրո և մահվան գաղափարը: Դրամայի հերոսուհին՝ Ադելլան, նախընտրում է մեռնել հանուն սիրո, նա դիմում է ինքնասպանության, որովհետև ինքնիշխան մայրը թույլ չի տալիս նրան երջանիկ սիրով ապրել սիրած տղամարդու հետ:

Սրանով Լորկան հանրությանն է ներկայացնում հերոսուհու մի կերպար, ով, հասկանալով, որ անհնար է սեր վայելել ստից և դաժանություններից ապականված հասարակության մեջ, դառնում է սեփական սիրո և ողբերգական մահվան զոհը:

Ինտիմ ոլորտի և իշխանության ճնշող ուժի միջև եղած խնդիրները կատարելապես միաձույլ են: Բերնարդան և՛ իշխանական ուժի ներկայացուցիչ է, և՛ հետևողական մայր, ով խոչընդոտում է սեփական դուստրերի ինքնահաստատմանը, անհատականացման ձևավորմանը, նա սպառում է աղջիկների կյանքը անձուկ լռության մեջ լոկ այն պատճառով, որ ինքն է այդպես ճիշտ համարում:

Լորկան առաջ է քաշում պատվի գաղափարը, ինչը Բերնարդայի մոտ հիվանդագին բնույթ է կրում և հասնում ծայրահեղության: Բերնարդան դառնում է «չգիտակցված» պատվի գերին, կամակատարը, ով զոհում է ամեն ինչ՝ հանուն հասարակական կարծիքի: Բերնարդան Անդալուզիայի արժանի զավակն է, ով առաջնորդվում է «Զոհել բացառապես ամեն

---

[1] Allen Josephs and Juan Caballero "La Casa de Bernarda Alba", 1985,Madrid,p.323-345

ինչ և ամենքին հանուն պատվի և հասարակական կարծիքի»՝ անդալուզյան հասարակությանը տիպիկ կերպար: Սկզբունքորեն նրան չի հուզում դուստերի ճակատագիրը, նա հսկում է նրանց վարքագիծը, որովհետև վախենում է հասարակական կարծիքից, աղջիկների յուրաքանչյուր «սխալ» արարքի դեպքում, նույն հասարակությունը, որին Բերնարդան այնքան դատապարտել է, իր դեմ դուրս կգա և անխնա կքննադատի նրան՝ ծաղրուծանակի ենթարկելով իր ամբողջ ընտանիքը:

Չնայած որ պիեսը զուրկ է բանաստեղծական տողերից, այնուամենայնիվ, գեղարվեստական հրաշալի տարրերով միևնույն հարթության վրա է դնում անհատի և հասարակության միջև եղած կոնֆլիկտները և տանում դրա տրամաբանական հանգուցալուծմանը: Այն գեղարվեստական է, ճոխ, ցայտուն, բայց նաև լիովին ռեալիստական, որը կոչված է բացահայտելու հասարակության իրական պատկերը՝ քաղքենիություն, կեղծ բարոյականություն, անթաքույց շողոքորթություն:

Այս արձակ ստեղծագործության հերոսները խոսում են, բղավում, լաց լինում, հուսահատվում, բայց այդ ամենն անում են բանաստեղծական հանգով:

Ինչ վերաբերում է սյուժեին, ապա գործողությունները չեն, որ զարգացնում են այն, այլ լեզուն, երկխոսությունները: Սկզբում պիեսն առանձնանում է սովորական իրականությունը պատկերող լեզվով, հետո միայն այդ պարզ լեզուն վերածվում է բազմաբովանդակ սիմվոլների: Թվում է, թե մենք սկսում ենք ատել Բերնարդային հենց սկզբից, երբ նա դեռ ոչ մի դերակատարում չի ունեցել պիեսում, մենք արդեն բացասական ենք վերաբերվում նրա կերպարին, երբ անդալուզյան կծու լեզվով օժտված Լա Պոնսիան՝ սպասուհին, խոսում է Բերնարդայի մասին: Առհասարակ դժվար է հասկանալ անդալուզյան լեզուն, խոսվածքը, որովհետև այն երկակի է իր բովանդակության պլանում, այն, ինչ ասվում է, կարելի է հասկանալ և ընդունել թե՛ որպես հեգնանք, թե՛ պարզամիտ և ոչ միտումնավոր արված արտահայտություն: Պիեսում տեղ են գտել նաև ժողովրդական առածներ, ասացվածքներ, որոնք հատկապես երևում են Բերնարդայի խոսքում, ով իր ավանդապաշտությանը և բարոյափիլիսոփայական քարոզները տեղ հասցնելու համար օգտագործում է ժողովրդական, խրատական բազմաթիվ առածներ, ըստ նրա՝ դրանք խորապես ճշմարտացի են, որովհետև եկել են դարերի խորքից, իսկ հեղինակներն իր նախահայրերն են, և ուրեմն՝ կարելի է ենթադրել, որ պիեսում գերակշռում է առորյա-խոսակցական ոճը:

Բեմահարթակին երևում են կանայք, ժամանակ առ ժամանակ զգացվում է Պեպե Էլ Ռումանոյի հեռավոր ներկայությունը: Աղջիկները հաճախ փորձում են ձեղքել մոր երկաթե կամքը, հակադրվել նրա ճնշող իշխանությանը, հասարակական կարծիքին և ավանդապաշտությանը,

որոնք ոտնահարում են մարդու կենսաբանական կամ պարզապես բնական պահանջների բավարարման կարևորությունը:

Այսպիսով՝ Լորկայի հերոսուհիները տառապում են, կեղեքվում և լքում երկրային կյանքը հասարակական և բարոյական «գրված և չգրված» օրենքների պատճառով: Բերնարդային հակադրվում է դուստրը՝ Ադելան, ով կոտրում է, փշրում նույն հասարակության սահմանած նորմերը՝ հստակ գիտակցելով դրա կործանարար հետևանքները: Նա այլևս չի կարող շարունակել ապրել չորս սպիտակ պատերի մեջ բանտարկված, որովհետև սիրած տղամարդու հետ ապրել է քաղցր սիրո, վայելքի ժամերը, իրեն մարդկայնորեն երջանիկ է զգացել, իսկ հասարակությունը, որտեղ մարդիկ անազատ են, ինչպես Բերնարդայի աղջիկներն իրենց տանը, չի հանդուրժի երջանիկներին. թող կինը լինի դժբախտ, բայց բարոյական[1]:

Հանուն սիրած տղամարդու և սիրո՝ Ադելան ինքնասպան է լինում, բայց Բերնարդան չի ցավում, ճիշտ հակառակը, նա հպարտության վեհ զգացում է ապրում, ճիշտ է, աղջիկն ինքնասպան է եղել, բայց նա կույս է մահացել, և բոլորը կիմանան, որ Բերնարդա Ալբայի դուստրն անպատիվ չի մահացել:

Հավեշտալին այն է, որ Բերնարդան իր տան ամենաբանտարկված կինն է, նրա բանտի պարիսպները կառուցված են անդալուզյան չոր մտածելակերպից և ավանդույթներից, նրան անհանգստացնում է այն, որ աղջիկներն ազատ չեն, բայց ողջ ուժով ձգտում են այդ ազատությանը:

Լորկան գրում է.

«Չնայած պիեսը կաստիլյան ծագում ունի, այնուամենայնիվ, այն մինչև ուղնուծուծը խրված է անդալուզյան բարքերի, ավանդույթների, կենցաղավարության մեջ, նույնիսկ միևնույն ժամանակագրության մեջ Անդալուզիան էապես տարբերվել է Բարսելոնից և Մադրիդից, այստեղ մտածողության խնդիր կա, իսկ անդալուզցիները միշտ էլ տարբերվել են նրանցից՝ իրենց ավանդապաշտությամբ և պահպանողականությամբ»:

Ստեղծագործությունը քննադատական բնույթի է, բայց այն ուղղված է ոչ թե հասարակության բարոյական արժեքներին, այլ դրա շահագործմանը, անտեղի վկայակոչմանը, երբ կարելի է լինել «բարոյական» առանց բարձրագոչ «չգրված» օրենքների մասին բարձրաձայնելու:

«Արյունոտ հարսանիք» (1932) պիեսը գրվել է իրական փաստերի հիման վրա, որի բովանդակությունն են կազմում սերն ու մահը: Այն պոետիկական և թատերական արվեստի գլուխգործոց է, որն իր մեջ կրում

---

[1] Rubia Barcia "El realism magico de "La casa de Bernarda Alba", Revista Castellana moderna,1965, Madrid,p. 65-67

է կյանքի և մահվան, հնի և նորի, սիրո և ատելության հակադրություններն իրենց կործանարար հետևանքներով: Ստեղծագործությունն ընդգրկում է հեղինակի ծննդավայրի՝ Անդալուզիայի սովորույթները. որոնք, գալով դարերի խորքից, գերիշխում են մինչ հիմա:

Լորկան 20-րդ դարի այն բացառիկ գրողներից է, ով դիմում է միֆերին, լեգենդներին և բնության արտասովոր և շատ հաճախ ֆանտաստիկ ուժերին, սրանք ընթերցողին և հանդիսատեսին տանում են մութ, ստվերոտ կրքերի աշխարհը. սերը միակ ուժն է, որ հաղթում է մահին:

«Արյունոտ հարսանիք» պիեսը սիրո և մահվան անդառնալի ողբերգություն է: Արյան կանչն իր հերթին խորացնում է պիեսի դրամատիկ ընթացքը: Սիրահարները բազմիցս փորձել են մոռանալ իրար, բայց իսկական սիրո դեմ ոչինչ չես անի:

Հարսանիքը դառնում է արյունոտ, որովհետև հասարակության կեղծ օրինապաշտները չեն ների նրանց, ովքեր կփորձեն արհամարհել հասարակական կարծիքը, իսկ սիրահարները՝ նույնիսկ գիտակցելով վերահաս մահվան շունչը, անձնատուր են լինում սիրո վայելքին:

Բախտի և ճակատագրի հետ Լորկան սերտորեն կապում է նաև սեռական կրքի և արգելված սիրո գաղափարները: Սրանց մասին խոսելիս պետք է նկատի ունենալ երկու պլան. իրական պլան, որտեղ արտացոլվում են մոր* Ֆելիքսների ընտանիքի հանդեպ ունեցած թշնամանքը, հասարակության դերը, սոցիալական խնդիրներ, որոնք պատնեշ են դառնում սիրո և ամուսնության միջև, քանի որ ամուսնական համաձայնությունը հասարակության կողմից գիտակցվում է որպես առևտրային գործարք, որն իր հերթին բացահայտում է փողի և հարստության անկասելի ուժը և երկրորդ՝ երազային պլան, որն արտացոլում է մարդու ներաշխարհը, անգիտակցական շերտը, որն առաջ է բերում մարդկային, բայց անկառավարելի բնազդներ, նաև ենթագիտակցական շերտը, որն ամբողջ ուժով արթնանում է Լեոնարդոյի մոտ: Տղան հանկարծ հիշում է երբեմնի սերը, աղջկան, որից բաժանվել է, ամուսնացել ուրիշի հետ, բայց, հասկանալով, որ նա շուտով ուրիշի հետ է ամուսնանալու, այժմ նրան սիրում է ավելի, քան երբևէ:

Այսպիսի արգելված սիրո մասին է խոսում Լորկան.

«Սերը և սեռական հարաբերությունները տարբեր կերպ են գիտակցվում հերոսների կողմից. երիտասարդների համար այն՝ սիրելիին մոտ գտնվելու և նրա հետ վայելքների գագաթնակետին հասնելու միջոց է, իսկ մեծահասակների համար՝ սերնդագործության միջոց, սերունդը շարունակելու կենսափորձ»,- այս առիթով գրում է Լորկան[1]:

Հենց սկզբում Մայրը, որը որպես հատուկ անուն է ներկայանում, իր

---

[1] Revista Cruz y Raya" Bodas de Sangre" Editorial El arbol.1935, Barcelona,p.54-63

խոսքով կարծես թե հուշում է ողջ դրամայի առանցքային կետերի մասին: Նա շատ խորհրդավոր կերպար է. մի կողմից ներկայանում է որպես հողի վերամշակման արհեստավարժ մասնագետ, մյուս կողմից՝ խորաթափանց, տրամաբան և կանխագուշակության ունակությամբ փայլող մարգարե:

Այս կինն ուժեղ է, տոկուն, նա արմատապես կապված է ամուսնու և որդու սպանությունների համար տված վրեժխնդրության իր երդմանը: Նա սիրում է իր մյուս որդուն, ուզում է նրան երջանիկ տեսնել, բայց մայրական զգացմունքները և բարոյական նորմերը չեն թողնում մոռանալ վրեժի մասին:

Առհասարակ Լորկայի գրեթե բոլոր դրամաներում կանայք առավել դրամատիկ կերպարներ են կերտում: Նրանք ավելի տաքարյուն են, հիշաչար, խստաբարո. նրանք են, որ վրեժխնդրությունը հասցնում են իր տրամաբանական հանգուցալուծմանը:

Հետևելով Լոպե դե Վեգային՝ Լորկան զարգացնում է պատվի գաղափարը: Մայրն ամեն օր այցելում է իր մահացած տղամարդկանց շիրիմներին, հսկում է դրանց, չլինի այնպես, որ հանկարծ մարդասպան Ֆելիքսների ընտանիքից որևէ մեկին նրանց կողքին հուղարկավորեն:

Հասարակական կարծիքն անմասն չի մնում այս պիեսում: Մայրը հպարտությամբ պատմում է հարսնացուի հորը.

«Իմ տղայի երակներում իսկական տղամարդու արյուն է հոսում, նա պարկեշտ է, երբեք գինի չի խմել և մինչ ամուսնությունը ոչ մի կնոջ չի ծանաչել: Ես հպարտ եմ, որովհետև բոլորը գիտեն իմ որդու արժանիքների մասին»:

Հարսանիքի օրը Հարսնացուն փախուստի է դիմում: Պատվի գաղափարը գլուխ է բարձրացնում վիրավորված Փեսացուի մոտ. նա որոշում է ամեն գնով վրեժխնդիր լինել կատարվածի համար: Մայրը կարծես հանգիստ է, որովհետև վաղուց էր կանխագուշակել, որ Ֆելիքսների հետ որևէ առնչություն ունենալը պիտի հանգեցներ ճակատագրական ողբերգության:

Բնությունը, Լուսինը, Մուրացիկը մահվան խորհրդանիշ են, երգչախումբն իր հերթին մահ է գուժում. այլընտրանք չկա: Լորկան առաջ է քաշում ճակատագրի գաղափարը, որը ղեկավարում է հերոսներին.

«Ճակատագրից չես փախչի, ուր էլ գնաս»:

Սպանություններից հետո Հարսնացուն ասում է.

«Ոչ ոք ի զորու չէ դեմ գնալ ճակատագրին, այն լիովին տնօրինում է մարդուն, այն ուժեղ է ծովի ալիքի հարվածից, իր խորքը տանելով՝ հազարավոր կյանքեր է խորտակում»:

Աղջիկը խոսում է նաև հպարտության գաղափարի մասին, վիրավորված կնոջ հպարտություն, որն իրեն ստիպում է ուրիշի հետ ամուսնա-

նալ և ուրիշին սիրել: Բայց Լեոնարդոն հակադրվում է նրան, որովհետև վաղուց հասկացել է, որ հպարտությունը չի օգնում, երբ սիրում ես, ո՛չ ժամանակն է բուժում, ո՛չ էլ պատերն ու պատնեշներն են թաքցնում սերը. այն, ինչ սիրտդ է մտել, չես հանի:

Հարկ է ուշադրություն դարձնել նաև պիեսի մյուս կարևոր գաղափարներից մեկին՝ արյան կանչին. Հարսնացուն փախչում է Լեոնարդոյի հետ հարսանիքի օրը, որովհետև արյունը թեժացել է երակներում և տանում է անսահման հեռուներ, այնտեղ, որտեղ սեփական արյունը կձուլվի սիրած տղամարդու արյանը:

Ըստ Լորկայի՝ չպետք է դեմ գնալ արյան կանչին, լավ է արյուն թափել, զոհել և զոհաբերվել, բայց հետևել նրա ձայնին, իսկ երբ երկու սիրողների արյունն է ձուլվում, ապա նրանց համար այլևս մահ չկա:

Այսպիսին է Ֆեդերիկո Գարսիա Լորկան, այսպիսին են մեծն գրողի ստեղծագործությունները, որոնց շնորհիվ իսպանական թատրոնը, հիրավի, իր արժանի տեղը գտավ համաշխարհային հռչակ վայելող մյուս թատրոնների կողքին: